ՀՀ ԿԳՄՍՆ

Վերապատրաստող կազմակերպություն՝

«Երևանի Լեոյի անվան հ.65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Հետազոտական աշխատանք

Հետազոտության թեման՝ **ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Ուսուցիչ՝ Աղասյան Մելինե

Դպրոց՝ Լևոն Միրիջանյանի անվան հ.155 հիմնական դպրոց

Ղեկավար՝ Գ. Վարդանյան

Առարկա՝ «Անգլերեն»

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ.1 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1.1 Սովորողների ստեղծագործական ունակությունների, նախաձեռնության և ինքնուրույնության զարգացման հնարավորությունները անգլերենի դասավանդման ընթացքում.....5

1.2 Փորձարարական մաս 14

Եզրակացություններ.....18

Օգտագործված գրականության ցանկ.....19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթական համակարգը սահմանում է նոր կարողունակությունների համակարգ թե՛ սովորողների, թե՛ դասավանդողների համար: Անհերքելի փաստ է, որ օտար լեզուները ընդլայնում են սովորողի աշխարհայացքը, նպաստում հաղորդակցման և հանրամշակույթային կարողությունների ձևավորմանը, լեզվական նորմերի ընկալմանը: Օտար լեզվի դասավանդումը խթանում է սովորողների խոսքային կարողությունների զարգացումը, ընդլայնում է լեզվամտածողությունը, միևնույն ժամանակ ձևավորում նոր հմտություններ ու կարողություններ, այդ թվում՝ ստեղծագործական ունակություններն ու նախաձեռնությունը: Սովորողի համար շոշափելի հաղթանակ է օտար լեզվով ազատ հաղորդակցվելու կարողությունը, սակայն այդ արդյունքին հասնելը պահանջում է երկարատև աշխատանք, որտեղ կարևոր են թե՛ սովորողի նախաձեռնողականությունն ու մոտիվացիան, թե՛ ուսուցչի մասնագիտական որակները: Սովորողի ստեղծագործական ունակությունների, նախաձեռնության և ինքնուրույնության զարգացումն այսօր կրթական համակարգում օրապահանջ է: Այս ամենը իմանալով ու կարողանալով՝ սովորողը հեշտությամբ կարող է հաղթահարել ցանկացած դժվարություն, լուծել իր առջև դրված խնդիրները, ձևակեպել նպատակներ ու սեփական ուժերով հասնել դրանց:

Դպչոցում ուսուցչի և սովորողի համագործակցության կայացման և ուսումնառության ընթացքում ցանկալի վերջնարդյունքի հաստատմանը մեծապես կարող է օգնել կրթական համակարգի արդիականացումը: Նոր մեթոդների ներդրումը, ժամանակակից բաղադրիչներով զինված դասն ունակ է հետաքրքրել սովորողներին, բարձրացնել նրանց աշխատունակությունը, դարձնել ինքնուրույն ու նախաձեռնող: Այս ամենը կարելի է իրականացնել նաև անգլերենի դասավանդման ընթացքում: Ակադեմիական գիտելիքների հաղորդմանը զուգահեռ՝ ուսուցիչն անգլերենի դասի ընթացքում ունի անսահման հնարավորություններ իր սովորողին ինքնուրույն ու նախաձեռնող դարձնելու համար, ինքնուրույն գործելու համար միջավայր ապահովելու առումով:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ նորարարություններով պայմանավորված կրթական միջավայրի ստեղծումը, սովորողի համար լայն հնարավորություններ է տալիս դասին հաճույքով մասնակցելու, ուսումնական առարկան կարևոր համարելու, ուսուցանվող թեման խորքային ուսումնասիրելու ու վերլուծելու, տեսական գիտելիքը գործնականում կիրառելու տեսանկյունից:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Պայմանավորված կրթական նոր պահանջներով՝ սովորողների համընդհանուր զարգացման համար անկյունաքարային են ինքնուրույնությունը, նախաձեռնությունն ու ստեղծագործական ունակությունները: Հենց վերը թվարկված կարողությունների և հմտությունների կարևորությունն էլ կդնենք մեր հետազոտության հիմքում և կպայմանավորենք հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը:

- Դիտարկել աշակերտակենտրոն դասի դերը սովորողներ համագործակցային, նախաձեռնողական ստեղծագործական և այլ կարողությունների ձեռքբերման ու զարգացման գործում:
- Ցույց տալ անգլերենի դասավանդման շրջանակներում ուսուցչի դերը վերը թվարկած կարողությունները ձևավորելու հարցում:
- Շեշտադրել սովորողների ինքնուրույնության անհրաժեշտությունը լեզվական կարողություններ ձեռք բերելու ու զարգացնելու գործընթացում:

Հետազոտության խնդիրը:

- Ուսումնասիրել սովորողի անկախ, ինքնուրույն, ստեղծարար մոտեցման դերը վերջինիս առաջադիմության, մոտիվացիայի բարձրացման տեսանկյունից:
- Վերլուծել ուսուցման մեթոդների ճիշտ ընտրության դերն ու նշանակությունը՝ որպես կրթական համակարգի արդիականացման բաղադրիչ:

ԳԼՈՒԽ 1 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1.1 Սովորողների ստեղծագործական ունակությունների, նախաձեռնության և ինքնուրույնության զարգացման հնարավորությունները անգլերենի դասավանդման ընթացքում

Ինքնուրույն ու նախաձեռնող սովորողի ձևավորումը կրթական համակարգի գլխավոր նպատակներից մեկն է: Սովորողների ստեղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացումն այդ թվում և անգլերենի դասավանդման ընթացքում նույնպես դիտարկվում է որպես կրթության կարևոր խնդիր: Սովորողների ստեղծագործական ունակությունները կարևոր հանգամանք են հանդիսանում ժամանակակից աշխարհում նորանոր հաջողություններ ունենալու, առկա խնդիրներին հեշտ լուծումներ տալու, նոր գաղափարներ իրականացնելու տեսանկյունից: Հայտնի է, որ օտար լեզուն, որպես ուսումնական առարկա, նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, է նրանց ճանաչողական կարողությունները, խոսքն ու մտածողությունը, ուստի և օտար լեզվի դասավանդման ընթացքում կարելի է սովորողի մոտ զարգացնել մի շարք այլ լրացուցիչ կարողություններ, որոնք կարող են ապահովել վերջիններիս բնականոն զարգացումը:

Ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը կախված չէ միայն շահառու մեկ կողմից: Միայն սովորողի կամ ուսուցչի ջանքերով հնարավոր չէ բարձրացնել կրթության որակը, ուստի կարելի է ասել, որ այս հիմնախնդիրը պահանջում է համակարգային մոտեցումներ: Այս համատեքստում կարևոր է սովորողի այն գիտակցումը, որ կրթությունը բարեկեցիկ ապագա ունենալու հիմնասյունն է, իսկ օտար լեզուների իմացությունը նոր աշխարհում կողմնորոշվելու ու առաջ գնալու միջոց: Ուստի ուսուցիչն ամեն կերպ պետք է սովորողի համար տեսանելի դարձնի կրթության կարևորությունը, որը միայն բարձր գնահատականի մեջ չէ ամփոփված: Սովորողը պետք է հասկանա կայուն ու առարկայական գիտելիքի, հմտության, կարողության կարևոր նշանակությունը, հասկան, որ այդ գիտելիքն ու կարողությունը կարող է կիրառել ինքնուրույն, առանց որևէ օգնության ունենալ հաղթանակներ: Սեփական համոզմունքների վրա ձևավորված մոտիվացիան ամենակարևորն է կրթական համակարգում:

Ուսումնառության ընթացքում հեգեբանական հարմարմարավետ պայմաններն ու բարենպաստ մթնոլորնտն միաժամանակ և՝ զարգացնող, և հոգեշտկող նշանակություն ունեն: Նման պայմաններում սովորողների ամբողջ էներգիան ծախսվում է ոչ թե ահնգանգստության, վախի տագնապի, այլ ուսումնական գործունեության, նոր գաղափարների և մտահաղացումների, ստեղծագործական կարողությունների դրսևորումների ուղղությամբ[1]:

Դասավանդման նորագույն մոտեցումների, ակտիվ և ինտերակտիվ մեթոդների կիրառումը դասավանդման ընթացքում ուսուցչին թույլ են տալիս կառավարելի դարձնել դասարանը, մոտիվացնել ու ոգևորել սովորողներին, գնահատել նրանց կրթական կարիքները: Եթե դասը հետաքրքիր է, ակտիվ , ապա սովորողը հաճույքով է մասնակցում դասին: Սա գիտի յուրաքանչյուր ուսուցիչ: Միջազգային փորձը վկայում է, որ կրթության ոլորտում հաջողության հասնելու համար կարևոր է ունենալ բարձրակարգ ուսուցչական կազմ և ժամանակի պահանջներին համապատասխանող, աշակերտների սովորելու ցանկությունը խթանող բովանդակություն: Եթե կրթական համակարգը չունենա բարձրակարգ մանկավարժական կազմ և որակյալ ուսումնական բովանդակություն, ապա հասարակությունը իր կրթական պահանջմունքները բավարարելու է դպրոցից դուրս, իսկ վերջինս դառնալու է ձևական և անարդյունավետ հաստատություն: Ուստի կարևոր ենք համարում ուսումնական հաստատության ուսուցչի դերը կրթության որակի բարձրացման գործում, դրան ուղղված վերջինիս կողմից իրականացրած կառուցողական քայլերը և, որ ամենակարևորն է, փոխհամագործակցությունը սովորողի հետ՝ որպես կրթության առաջնային շահակից:

Այս համատեքստում կարևոր ենք համարում ուսուցչի կողմից սովորողի ցանկացած նորորարական քայլերի խրախուսումը, վերջինիս ինքնուրույն գործելու պահանջմունքի բավարարումը:

- Անգլերենի դասավանդման ժամանակ սովորողը ծանոթանում է այլ մշակույթի առանձնահատկութոյններն, դրա առանձնահատկությունների: Սա վերջինիս համար անծանոթ միջավայր է, հաճախ կարող է առաջացնել ընկալման դժվարություններ: Սակայն հետաքրքիր ու դինամիկ դասապրոցեսը կարող է հետաքրքրել սովորողին և բարձրացնել նրա հետաքրքրությունները: Անգլերենի դասավանդման ընթացքում ձևավորվում է նաև սովորողների մշակութային կարողունակությունը: «Աշակերտները ձևավորում են սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային

[1] http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Naxashavix/2013(4).pdf «Նախաշավիղ» հանդես, Երևան, 2013, էջ 10:

ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում: Նրանք ի վիճակի են զարգացնելու սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը և ձևավորելով մշակութային գրագիտություն և ճաշակ[2]»

Օտար լեզվի տիրապետումը նպաստում է նաև այլ ուսումնական առարկաներից՝ աշխարհագրությունից, պատմությունից, գրականությունից սովորողների կոնկրետ պատկերացումների հարստացմանը: Օտար լեզվով շփումը կարգավորում է անհատի վարքը, խթանում այս կամ այն խոսքային գործունեությունը, համագործակցությունը: Այն նպաստում է անձնավորության արժեքային կողմնորոշիչների, հայացքների և համոզմունքների ձևավորմանը, ծառայում է սովորողի վարքի և փոխհարաբերությունների, խոսքային կարողությունների զարգացմանը, ինչը դրսևորում է խոսքային էթիկայի նորմերի պահպանման միջոցով[3]:

Եթե ուսուցիչը նպատակ է դրել անգլերենի դասին զարգացնել սովորողների ստեղծագործական ունակությունները, ապա պետք է քաջ գիտակցի, որ ավանդական ուսուցմամբ գործընթացն առաջ տանելն անչափ բարդ է լինելու: Ավանդական ենք անվանում զննական, բացատրական այն մեթոդներին, որոնց հիմքում ընկած է գիտելիքի պարզ փոխանցումը սովորողին: Կարծում ենք՝ այդ նպատակին հասնելու համար ակտիվ ուսուցման մեթոդը ամենաարդիականն է: Այս մեթոդական համակարգը չի նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքի, հմտության, կարողության ձեռքբերում: Ակակտիվ ուսուցման ժամանակ սովորողները համագործակցում են ուսուցչի հետ, հնարավորություն ունեն ողջ դասապրոցեսի ընթացքում ակտիվ աշխատել:

Դասն ակտիվ ու շարժուն անցկացնելու, սովորողների ճանաչողական ու ստեղծագործական ունակություններն անգլերենի դասավանդման ընթացքում զարգացնելու նպատակով՝ուսուցիչը կարող է կիրառել մի շարք մեթոդամանկավարժական հնարներ, որոնցից են՝

- ԳՈՒՍ
- Տ-աձև աղյուսակ
- Մ-աձև աղյուսակ

[2] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
[3] Գիտամեթոդական հանդես, Օտար լեզուները Հայաստանում, էջ 9:

- Շրջագայություն անցած թեմաների էջերով
- Ձնագնդի
- Խճանկար
- Երեք բանալի և մեկ կողպեք
- Մտագրոհ
- Դասի զեկուցող
- Սատանի հնար

Նմանօրինակ հնարների կիրառումը սովորողի առաջ բացում է ստեղծագործ մոտեցումներ ցուցաբերելու լայն հնարավորություններ: Այս կերպ դասի փուլերը հստակ տարանջատվում են, լրացնում միմյանց, ինչն իր հերթին նպաստում է, որ դասարանը չկորցնի ակտիվությունը:

Ուսումնական գործընթացքում ի թիվս մի շարք խնդիրների, հատկապես կարևորվում է ստեղծագործական մտածողության ձևավորումը պատմելու տեսակների կիրառման ճանապարհով, որը թույլ է տալիս ինքնուրույն մտածել, կարողանալ հայտնել սեփական կարծիքը և հիմնավորել այն: Անգլերենի դասաժամին ստեղծագործական ունակությունների զարգացման հիմնական եղանակներից է նյութի վերարտադրումը: Պատմելու տեսակներն են՝

- մանրամասն կամ բնագրին հարազատ պատմել;
- համառոտ պատմել;
- ընտրովի պատմել;
- դատողություններով կամ մեկնաբանություններով պատմել;
- ձևափոխված պատմել;
- ստեղծագործաբար պատմել, շարունակելով պատմել;
- պատմել որպես մասնակից և պատմել որպես ականատես[4]:

Ձևափոխված կամ վերափոխումներով պատմելու տեսակներից է դատողություններով պատմելը: Դատողություններով պատմելիս աշակերտները սովորում են ոչ միայն պատմել փոփոխություններով, այլ նաև վերլուծել գործող անձանց կերպարները, վարքը, կարծիք կազմել նրանց մասին, հիմնավորել նրանց գործունեությունը, այդ մասին դատողություններ ու եզրահանգումներ կատարել:

Անգլերենի դասին շատ կարևոր է նոր նյութի հաղորդումը: Նոր նյութի բացատրության ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ աշակերտը միանգամից չի կարող շատ բան սովորել: Հետևաբար՝ նոր նյութը բացատրելիս

[4] Ձ. Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2018, էջ 163

ուսուցիչը պետք է ուշադիր լինի, որպեսզի չգերազանցի այդ ծավալը: Ծավալը գերազանցելու դեպքում աշակերտի աշխատանքային հիշողությունը չի կարողանում հասկանալ նոր նյութը: Ստեղծագործական ունակությունների զարգացման, ինքնուրույն խոսքի ձևավորմանը խթանող հնար է «Կենտրոններով աշխատանքը»: Ուսուցիչը կազմում է 4-5 հոգուց բաղկացած խմբեր: Խմբերը ստանում են տեքստը և մոտենում համապատասխան անվանումներով կենտրոններին: Նախօրոք ընտրված կենտրոններն են՝

- Հետազոտողների կենտրոն
- Ստեղծագործողների կենտրոն
- Գրավոր աշխատանքի կենտրոն
- Բացահայտողների կենտրոն

Աշխատանքի ընթացքը.

Բացահայտողների կենտրոն

Մասնակից սովորողները ընթերցում են տեքստը, կատարում նշումներ, վեր հանում վերջինիս հիմնական միտքը, ենթատեքստը և ներկայացնում ընկերներին:

Հետազոտողների կենտրոն

Այս խմբում ընդգրկված սովորողներն էլ ընթերցում են տեքստը և օգտվելով այդ պահին ձեռքի տակ եղած այլ աղբյուրներից՝ համացանց, գրականություն, փորձում են լրացուցիչ հետաքրքիր նյութեր հայթայթել տեքստի վերաբերյալ:

Ստեղծագործողների կենտրոն

Մասնակից սովորողները, տեքստի առանձնահատկություններից ելնելով, փորձում են այն որևէ կերպ վերարտադրել և ներկայացնել, օրինակ՝ բեմականացում, պաստառի պատրաստում, նկարազարդում, երգ, պար և այլն:

Գրավոր աշխատանքի կենտրոն

Սովորողները ընթերցում են տեքստը և իրականացնում լեզվական կամ բառային աշխատանք՝ պահանջին համապատասխան:

Նշենք , որ աշխատանքի իրականացման ժամանակ սովորողները հաղորդակցվում են բացառապես անգլերեն լեզվով: Վերջում յուրաքանչյուր կենտրոնն ամփոփում է իր կատարած աշխատանքն ու գնահատվում: Թույլ տալով, որ սովորողներն ինքնուրույն հետազոտեն, ուսուցիչը, գիտելիքի յուրացմանը զուգահեռ, խթանեց, որ սովորողների մեջ զարգանան մի շարք նոր հմտություններ, կարողություններ ու որակներ, որոնցից են՝

- թիմում աշխատելու կարողություն,
- անգլերենով հաղորդակցվելու հմտություն,

- թիմային աշխատանքում պատասխանատու լինելու գիտակցում,
- ինքնուրույնություն, նախաձեռնողականություն,
- անսպասելի իրավիճակում կողմնորոշվելու կարողություն,
- համացանցային հարթակում կողմնորոշվելու, համապատասխան տեղեկատվությունը համակարգելու կարողություն,
- փոխգործակցելու կարողություն,
- աշխատանքին ստեղծագործաբար մոտենալու հմտություն:

Որպեսզի կիրառվող մեթոդական շղթան տա դրական արդյունք, սովորողը սկսի դասի ընթացքին մոտենալ ստեղծագործաբար, հարկավոր է կառավարելի դարձնել սովորողի ուշադրությունը, ամեն կերպ բերել վերջինիս դեպի դասը: Ազլերենի ուսուցման շրջանակներում պետք է օգտագործել զանազան զննական պարագաներ: Շատ դեպքերում դրանք կարող են պատրաստել հենց սովորողները, որն էլ լրացուցիչ խթան կարող է հանդիսանալ ստեղծագործական կարողությունների զարգացման համար: Ստեղծագործական ունակություններն ակտիվանում, ընդլայնվելու հնարավորություն են ունենում հատկապես խաղային մեթոդների ժամանակ: Խաղային ինտերակտիվ տեխնոլոգիաների հնարավորությունները բավական լայն են.

- Դրանք թույլ են տալիս ընդգրկել հիմնախնդիրների լայն ասպեկտ:
- Համապատասխանում են գործունեության տրամաբանությանը:
- Նպաստում են ուսումնական գործընթացի մասնակիցների՝ առավել մեծ թվով ընդգրկմանը, նրանց մղում են հանպատրաստից ակտիվության:
- Ավելի հեշտությամբ են հաղթահարվում կարծրատիպերը, շտկվում է ինքնագնահատականը:
- Հնարավորություն են ստեղծում համակողմանի վերլուծություններ, մեկնաբանություններ կատարելու և ստացված արդյունքները իմաստավորելու:
- Նպաստում են անձի բոլոր որակների՝ անհատական դրական և բացասական ընդունակությունների արտահայտմանը և այլն:
- Բացի այդ, խաղային տեխնոլոգիաների նպատակները համաձայնեցվում են սովորողների պրակտիկ պահանջմունքներին[5]:

Դերային խաղերի միջոցով ուսուցումը կարելի է համարել սովորողի սոցիալական զարգացման հիմքը: Քանի որ ուսուցման հիմքում ընդհանուր

[5] http://gspi.am/media/journal/2015n1b/8.pdf Լ.Վ.Գևորգյան, ժամանակակից ինտերակտիվ տեխնալոգիաների կիրառման առանձնահատկությունները, Երևան, 2015, էջ 75:

առմամաբ խաղն է, ուստի բոլոր սովորողները հաճույքով են մասնակցում դասին: Դերախաղը նպաստում է, որ սովորողը սովորի թիմում հարաբերություններ հաստատել, համապատասխան գործընկերներ գտնել: Բոլոր խաղերը, որոնք հիմնված են որոշակի պատմությունների դերախաղի վրա, մեծ նշանակություն ունեն սովորողների անհատականության զարգացման գործում, քանի որ խաղային մեթոդների միջոցով շատ հեշտ է սովորողների մեջ ձևավորել և՛ սոցիալական, և՛ բարոյական զգացմունքներ, ինչպես նաև հնարավորություն տալ աշխատանքին ստեղծագործաբար մոտենալու:

Անգլերենի դասաժամին դերային խաղերի կիրառությունը նպատակ ունի նաև աշակերտների մեջ զարգացնել արագ արձագանքելու, մտքերը հաջորդական կառուցելու կարողություն: Խաղային մեթոդների օգնությամբ աշակերտի անհատականության ձևավորումը, տարբեր հմտությունների, կարողությունների և գիտելիքների ձեռքբերումը տեղի է ունենում բնական, առանց ավելորդ ու հորինված բաղադրիչների: Սովորողը խաղային գործունեության ընթացքում անկաշկանդ է, չի լարվում, հնարավորություն է ունենում համագործակցելու դասընկերների հետ: Այս տեխնոլոգիայի օգնությամբ ուսուցիչն ամբողջապես կենտրոնացնում է աշակերտի ուշադրությունը:

Անգլերենի ուսուցման շրջանակներում, շատ հաճախ կարելի է ստեղծել միջառարկայական կապեր՝ թույլ տալով սովորողին խոսել իր հետաքրքրությունների մասին: Կարելի է ճանապարհորդել, ուսումնասիրել, հաշվել, երգել անգլերենի օգնությամբ, ինչն էլ ապահովում է համալիր գիտելիքների ստացում:

Ստեղծագործական ունակությունների զարգացման, ինքնուրույն խոսքի ձևավորմանը խթանող մի հնար է «Գուշակություն» հնարը: Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական կարևոր հասկացությունները կամ վերնագիրը թերթիկների վրա գրել, կտրատել առանձին բառերի և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում: Դասը սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը: Կարելի է առաջարկել նաև ստացածը կարդալով գուշակել՝ ինչի մասին է դասը, կարծիքները լսել և առաջարկել ուսումնասիրել բուն դասանյութն ու ընդհանրություններ կամ տարբերություններ գտնել գուշակածի ու դասանյութի միջև[6]: Ստացվեց, որ դասի մեջ ուսուցիչը մի հետաքրքիր կայծ դրեց՝ նպաստելով, որ դասարանը համակարգված աշխատի:

[6] https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020, էջ 23:

Անդրադառնանք նաև անգլերենի դասավանդման ընթացքում սովորողների ինքնուրույնության ու նախաձեռնության խթանման հնարավորություններին:

Ինչպես նշել էինք, արդի կրթական համակարգում առանցքային նշանակություն ունեն սովորողի ինքնուրույ մտածելու, գործելու, նախաձեռնողի դերում հանդես գալու կարողությունները: Այդ կարողությունները անձի կենսագործունեության բնականոն առաջընթացի համար անչափ կարևոր են, ուստի և հանրակրթական դպրոցում, նաև անգլերենի դասավանդման շրջանակներում ուսուցչի խնդիրն է ամեն կերպ ստեղծել միջավայր, որպեսզի սովորողը հնարավորություն ունենա դրսևորվել, ինքնուրույն ու նախաձեռնողական քայլեր կատարել: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ[7]»:

Նախաձեռնող սովորողը անդադար գնում է նորարարությունների հետևից տարբեր իրավիճակներում հստակ քայլեր ու գործողություններ կատարում: Նախաձեռնությունը մեկ հարթության վրա է բերում տարբեր մարդկանց՝ միավորելով նրանց հանուն մեկ գերագույն նպատակի: Սա մի շարժիչ ուժ է, որն առաջ է մղում ամեն մի նոր միտք դեպի իրականություն՝ հանգեցնելով դրական տեղաշարժի: Պակաս կարևոր չէ նաև սովորողի ինքնուրույնությունը, որի համար անհրաժեշտ նախապայմաններ են՝ որոշման կայացումը, ներքին ազատությունը, պատասխանատվության գիտակցումը, կայացման ձգտումը, ինչին հնարավոր է հասնել կայուն գիտելիքի առկայությամբ, բարձր արժեհամակարգի ձևավորմամբ և գործնական կարողությունների զարգացմամբ: Ինքնուրույնության խթանման համար անհրաժեշտ է կարևորել համապատասխան մոտեցումներն ու սպասումները ինչպես տարիքային տարբեր փուլերում, այնպես էլ կրթական տարբեր աստիճաններում:

Անգլերենի դասին սովորողների ինքնուրույնության ու նախաձեռնության զարգացումը մեծապես կախված է ուսուցչի մարդկային ու մասնագիտական որակներից: Ուսուցիչն է պլանավորում և իրականացնում դասապրոցեսը: Եթե սովորողի դերն ու մասնակցությունը դասին պասիվ է, ապա շատ դժվար կլինի վերջինիս մեջ զարգացնել ինքնուրույնություն: Պասիվ դաշտում գտնվող սովորողի մոտ, որպես կանոն, բացակայում է մոտիվացիան, ցածր է աշխատելու ցանկությունը: Ուստի և ուսուցիչը պետք է նպատակային պլանավորի դասի ընթացքը, դիմի նոր ու հետաքրքիր մեթոդներին, դասի տիպերին, խրախուսի ակտիվ ուսուցման սկզբունքները, հաճախ իրականացնի նախագծային ու հետազոտական աշխատանքներ՝ թույլ տալով, որ սովորողը լինի դասի կենտրոնում:

[7] https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ Հանրակրթության մասին օրենք, հոդված 27, կետ 10:

Անգլերենի դասաժամին նման գործելաոճը կարող է նպաստել նաև սովորողների խոսքային կարողության, լեզվամտածողության զարգացմանը, օտար լեզվով հաղորդակցական հմտությունների ձևավորմանը:

Համագործակցային մեթոդական համակարգի օգնությամբ ուսուցիչը շատ հեշտությամբ կարող է ապահովել դասի շարժունությունը: Թույլ տալով, որ սովորողները համագործակցեն, աշխատեն խմբերով, միասին հաղթահարեն դժվարությունները, ուսուցիչը կարող է ունենալ հետևյալ վերջնարդյունքները՝

- Սովորողները, հաղորդակցվելով միմյանց հետ, կհաղթահարեն օտար լեզվով շփման ընթացքում հնարավոր վախերն ու բարդույթները:
- Պասիվ բառապաշարից ակտիվ բառապաշար կտեղափոխվեն նոր բառեր, կհարստա բառային պաշարը:
- Սովորողը կկարևորի անգլերենի իմացության անհրաժեշտությունը/ եթե դժվարանա շփման մեջ/, կկատարի ինքնանդրադարձ, կգտնի սեփական բացթողումները:
- Կսովորի նոր հասկացություններ, կզրուցի օտար լեզվով իրեն հետաքրքրող թեմաներից, ինքնուրույն կձևակերպի հարցադրումներ:
- Աշխատանքին կմոտենա ստեղծագործաբար, կդառնա ավելի ինքնուրույն:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ավանդական դասից դուրս սովորողը հնարավորություն ունի համատեղելի դարձնել սեփական հետաքրքրությունները, երազանքները ուսումնառության գործընթացի հետ, ուստի և համագործակցային մեթոդական համակարգի կիրառումը առանձնակի ուշադրության է արժանի: Մի բան հստակ է՝ սովորողի սովորելու մոտիվացիան մեծապես կախված է հենց ուսուցչից, որքան ուսուցիչը խրախուսի, ցույց տա, թե որն է անգլերեն իմանալու անհրաժեշտությունը, դա հիմնավորի փաստերով, այնքան սովորողը կգա դեպի առարկան, բաց կլինի համագործակցության համար, իսկ արդյունքում կդառնա ինքնուրույն, կկարողանա դասի ընթացքին մոտենալ ստեղծագործաբար, կկատարի նախաձեռնողական քայլեր: Այս ամենը հաշվի առնելով՝ ուսուցիչն ամեն դասից առաջ պետք է մանրամասն կազմակերպի իր անելիքները, ձեռքի տակ ունենա նաև դիդակտիկ նյութեր, ՏՀՏ գործիքներ, որպեսզի դասը սովորողի համար լինի հետաքրքիր ու բովանդակալից:

1.2 Փորձարարական մաս

Տեսական մասում մեր կատարած պնդումները կիիմնավորենք դասի օրինակով, որն իրականացրել ենք 2021-2022 ուստարվա ընթացքում: Դիմել ենք ակտիվ ուսուցման մեթոդական համակարգին՝ ակնկալելով զարգացնել սովորողների ինքնուրույնությունը,նախաձեռնությունն ու ստեղծագործական ունակությունները:

ԱԿՏԻՎ ԴԱՍԻ ՕՐԻՆԱԿ

Առարկան՝ Անգլերեն

Դասարանը՝ 6-րդ

Դասի թեման՝<< Տարվա եղանակները>>

Դասի տիպը՝ Ամփոփման, գիտելիքների ստուգման դաս

Դասի նպատակները՝

ա. Գիտելիքներ

Աշակերտը պետք է իմանա՝

տարվա եղանակները, ամիսները, գույները, տարվա եղանակներին բնորոշ հագուստների անվանումները, մրգերի ու բանջարեղենների անվանումները՝ համապատասխան տարվա եղանակներին:

բ.Կարողություններ և հմտություններ

Աշակերտը պետք է կարողանա՝

- սահուն և հասկանալով ընթերցել բնագիրը
- մեկնաբանել ընթերցածի բովանդակությունը
- վերարտադրել բնագիրը
- աշխատանքի ընթացքում դրսևորել ստեղծագործականություն

գ. Արժեքային համակարգ՝

- վերաբերմունք արտահայտել բնության պահպանման մասին, գիտակցել բնապահպանական խնդիրների կարևորությունը, իմանալ՝ որ եղանակին ինչ հագուստ է հարկավոր կրել
- սովորել ճիշտ գնահատել բնության դերը մարդու կյանքում

Դասի կահավորումը՝

- ցուցապաստառ
- տարվա եղանակների նկարները

Միջառարկայական կապեր՝

- Երաժշտություն՝ Ա. Վիվալդի «Տարվա եղանակներ»
- Նկարչություն՝ երեխաների աշխատանքները թեմայի շրջանակներում

Կիրառվող մեթոդներ և հնարներ՝ Վեննի դիագրամ, քառաբաժան, մտագրոհ, T-աձև աղյուսակ, ԳՈՒՍ

Վեննի դիագրամ մեթոդի օգնությամբ սովորողները հաջորդաբար ներկայացրեցին տարվա եղանակներն ու դրանց ամիսները, ապա բանավոր հատկանշավորեցին ամեն մի եղանակը՝ բանալի բառերը գրելով T-աձև աղյուսակում:



Spring	Summer	Autumn	Winter
It is windy	It is sunny	It is raining	It is cold

Այնուհետև սովորողները ընթցեցին բնագիրն ու կատարեցին բանալի բառերի ձևաբանական վերլուծություն՝ Spring-գոյական, Summer-գոյական:

Դասարանը բաժանվեց 4 խմբի: Խմբերից յուրաքանչյուրին հանձնարարվեց թեմայի շուրջ գրել փոքրիկ նկարագրական տեքստ, ապա յուրաքանչյուր խմբի տրվեց հարցադրում `

- **Ի՞նչ իմացանք**
- **Ի՞նչ պարզեցինք**
- **Ի՞նչ գիտեինք**
- **Ձեր կարծիքը**

Հիմնվելով տեքստի բովանդակության վրա՝ սովորողները պատասխանեցին տրված հարցերին: Աշխատանքի իրականացման ընթացքում հարցադրմանը պատասխանեցին բոլոր սովորողները, ինչպես նաև հնարավորություն ունեցան փոխադարձ հարցադրումներ կատարել:

1. Ո ՞րն է զմռանը բնորոշ գույնը: / white/
2. Ի ՞նչ մրգեր գիտես, որոնք հասունանում են աշնանը:/ Peaches, pears, grapes,/
3. Ո ՞ր տոնին ես սպասում դեկտեմբեր ամսին: / Christmas/
4. Ինչպե ՞ս ես անցկացնում ամառային արձակուրդդ:/ I go to the beach with my family/
5. Ո ՞րն է գարնան առաջին ամիսը: / march/

Հաջորդիվ սովորողները կատարեցին գործնական աշխատանք՝ խմբային եղանակով: Կազմված 4 խմբերից յուրաքանչյուրին հանձնարարվեց մեկ տարվա եղանակ, որի վերաբերյալ հարկավոր է գրել բանալի բառեր՝ գույներ, հագուստներ, եղանակային երևույթներ, մրգերի ու բանջարեղենների անուններ, որոնք բնորոշ են տարվա այդ եղանակին:

Winter- Bad weather, It is snowing, cold, a hat, a sweater

Յուրաքանչյուր խմբից մեկն ամփոփեց իր խմբի աշխաատանքը: Գործնական աշխատանքից հետո իրականացվեց միջառարկայական դադար. Սովորողներն ունկնդրեցին Ա. Վիվալդի «Տարվա եղանակներ» ստեղծագործությունից հատված, որի ընթացքում նկարեցին իրենց ցանկացած տարվա եղանակը:

Դասի հաջորդ փուլում սովորողներին տրվեցին բառեր, որոնցով նրանք կազմեցին նախադասություններ՝ այդպիսով կիրառման մեջ դնելով սովորած բառերը՝ September, cold, winter, spring և այլն: Խոսքային կարողություններն ամրապնդելու համար իրականացվեց շարքերով խաղ: Սովորողները միմյանց թեմայի շրջանակներում հարցադրումներ հղեցին՝ ուղղելով ու լրացնելով մեկը մյուսին: Դասի ավարտին կիրառվեց ԳՈՒՍ հնարը՝ «գիտեի, ուզում էի իմանալ,

սովորեցի»: Սովորողներն իրականացրեցին փոխադարձ գնահատում, տրվեց տնային հանձնարարություն:

Այսպիսով, հաջորդ դասի հարցման ընթացքում պարզ դարձավ, որ սովորողների գերակշիռ մասը կարողանում է դասի հիմնական հասկացությունները մեկնաբանել, գիտի անծանոթ բառերի նշանակությունը, կարող է ինքնուրույն գործածել նախադասությունների մեջ: Խոսքը կշռադատված է, չկա մեխանիկական վերարտադրություն:

Կարծում ենք, որ այն վերջնարդյունքը, որն ակնկալում էինք ունենալ, ստացանք, քանի որ կարողացանք ապահովել սովորողների համաչափ մասնակցությունը դասին, թույլ տվեցինք, որ նրանք գործեն ինքնուրույն, ստեղծագործեն ու հանդես գան նախաձեռնողի դերում:

Լիահույս ենք, որ սույն աշխատանքը կդառնա ուղենիշ մեր մանկավարժական հետագա գործունեության ընթացքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատության թեման անսպառ ուսումնասիրության և վերլուծության երկարատև աշխատանք է պահանջում, այնուամենայնիվ մի բան հստակ է, եթե անգլերենի դասավանդման ընթացքում ուսուցիչը հիմնական գիտելիքների հաղորդմանը զուգահեռ նպատակ է դնում զարգացնել սովորողի պատկերավոր մտածողությունը, ինքնուրույն գործելու ու նախաձեռնողական քայլեր կատարելու կարողությունը, ապա անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ որոշակի կոնկրետ գոտում աշակերտն ունի իր հետաքրքրությունները, առանձնահատկությունները: Այս համատեքստում կրկին կցանկանանք շեշտադրել աշակերտակենտրոն ուսուցման կարևորությունը:

Սովորողի հետ հաշվի նստել, լսել նրա կարծիքը, խրախուսել վերջինիս, ստուգման ընթացքում շեշտադրել ոչ թե սխալ, այլ ճիշտ բաղադրիչը, կարծում ենք, որ նման մոտեցումը սովորողին ու դասարանը կդարձնեն հեշտ կառավարելի, և ուսուցիչն անպատճառ կհասնի հաջողության: Իսկ ահա ստեղծագործական ունակությունների զարգացումն անմիջական գործընթաց է, որը զուգահեռվում է հիմնական գիտելիքների հաղորդմանը, ուստի ուսուցիչը պետք է շփման համար ստեղծի հարմարավետ պայմաններ, որպեսզի ամեն կերպ խրախուսվի անհատի գիտակցումը, ինքնուրույնության կարևորությունը սովորողի մոտ: Անշուշտ, այս ամենից հետո կարելի է վստահաբար նշել, որ գործ կունենանք նախաձեռնող, մտածող, ստեղծագործող և ինքնուրույն դատող անհատի հետ: Կարևորագույն բաղադրիչ է նաև բարոյահոգեբանական կայուն մթնոլորտը, ինչը թույլ կտա, որ սովորողը հնարավորինս արագ ինտեգրվի հասարակություն ու նախաձեռնողի դերում լինի, ցանկանա սովորել ու իր սովորածը կիրառել ուսումնական հաստատությունից դուրս: Այս հարցում պակաս կարևոր չէ սոցիալական միջավայրի՝ այս պարագայում դասարանի ընդհանրական դերը:

Կցանկանայինք վերահաստատել նաև ուսուցչի աշխատանքի ընթացքում վերջինիս ընտրած մեթոդական եղանակների ու առհասարակ դասի տեսակների կարևոր նշանակությունը: Զանազան մեթոդների կիրառությունը, ակտիվ, գործուն դասերի, խմբային ու գործնական աշխատանքների իրականացումը, միջառարկայական կապերի ստեղծումը, միակ արդյունավետ եղանակներն են հաջողության հասնելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Naxashavix/2013(4).pdf «Նախաշավիղ» հանդես, Երևան, 2013:
2. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
3. Գիտամեթոդական հանդես, «Օտար լեզուները Հայաստանում»:
4. Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2018:
5. http://gspi.am/media/journal/2015n1b/8.pdf Լ.Վ.Գևորգյան, ժամանակակից ինտերակտիվ տեխնալոգիաների կիրառման առանձնահատկությունները, Երևան, 2015:
6. https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf Ուսուցման արդյունավետ հնարներ,Երևան, 2020:
7. https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ Հանրակրթության մասին օրենք: